



# Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍԱՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՑԻ

## ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄԷՆ ԵՏԲ ԵՐՐՈՐԴ ԿՐԻԱԿԻ 8 ՍԵՂՏԵՄԲԵՐ 2024

### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒԻ ԳԻՐՔԷՆ

(13.1-11)

**Ա**հաւաստիկ Բաբելոնի վերաբերող Տիրոջ պատգամը որ յայտնուեցաւ Ամոսի որդի Եսայիին.- Պատերազմի դրօշ կանգնեցէք մերկ լերան վրայ, ո՛վ իսրայէլացիներ, բարձրադաղակ ողջունեցէք եկող բանակները, մի՛ վախնաք, ձեռքով նշան ըրէք անոնց որոնք կու գան Բաբելոնի վրայ:

Ինծի համար նուիրագործուած պատե-  
րագմիկներն են անոնք, որոնք ես Բաբելոնի  
դէմ պիտի ղրկեմ որպէսզի գայն նուաճելով  
բարկութիւնս յագեցնեն եւ ինծի հետ  
ուրախանան: Լսեցէ՛ք լեռներուն վրայ  
բազմութիւններու աղմուկը. ձայնը  
բազմաթիւ ազգերու, ձայնը թագաւորներու  
եւ հաւաքուած ժողովուրդներու: Երկ-  
նաւոր Զօրքերու Տէրը ի՛նք հրամայեց  
սպառազինուած այս ժողովուրդներուն,  
որ գան հեռու երկիրներէ, հեռաւոր հորի-  
զոններէ. եւ իր պատերազմիկներուն հետ  
Տէրը ինք կու գայ ամբողջ աշխարհը  
աւերելու: Ողբացէ՛ք, որովհետեւ մօտ է  
Տիրոջ օրը, արդէն կը հասնի Աստուծոյ  
հարուածը: Այդ պատճառով ալ բոլորին  
ձեռքերը պիտի թուլնան, մարդոց սիրտերը  
վախով պիտի լեցուին. իշխանները խռովքի  
պիտի մատնուին, ծննդական կնոջ մը պէս՝  
երկունքով պիտի բռնուին. ամէն մարդ իր  
ընկերը պիտի մեղադրէ եւ ամօթէն իրենց

դէմքը բոցի պէս պիտի կարմրի: Արդարեւ  
ահա կու գայ Տիրոջ օրը, երբ Տէրը անողոք  
զայրոյթով ու սաստիկ բարկութեամբ  
անապատի պիտի վերածէ աշխարհը եւ  
անկէ բնաջինջ պիտի ընէ մեղաւորները:

Երկինքի աստղերը եւ Հայկին պէս բոլոր  
համաստեղութիւնները իրենց լոյսը պիտի  
չտան. արեւը իր ծագած պահուն պիտի  
խաւարի եւ լուսինը իր լոյսը պիտի չտայ:  
«Ես պիտի պատժեմ հարիքները որ կան  
ամբողջ աշխարհի մէջ, եւ ամբարիշտները՝  
իրենց մեղքերուն համար: Վերջ պիտի  
դնեմ անօրէններու հպարտութեան եւ  
պիտի խորտակեմ ամբարտաւաններու  
գոռոզութիւնը», կ'ըսէ Տէրը:

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆԳ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ

(7.4-16)

**Մ**եծ վստահութիւն ունիմ ձեր վրայ.  
մեծապէս հպարտ եմ ձեզմով: Մեր  
կրած բոլոր նեղութեանց մէջ ինքզինքս  
մխիթարուած եւ մեծապէս ուրախ կը  
զգամ: Որովհետեւ Մակեդոնիա հասնելէն  
ի վեր երբեք հանգիստ չունեցանք, այլ  
ամէն կողմէ՝ նեղութիւն: Մէկ կողմէ  
արտաքին թշնամութիւնները կը նեղէին  
մեզ, իսկ ներքնապէս՝ մեր վախը: Բայց  
Աստուած, որ կը մխիթարէ սրտաբեկները,  
Տիրոսի գալովը մեզ մխիթարեց:

Ուրախացուցիչը միայն Տիրոսի գալը



չէր: Ուրախացանք մանաւանդ, երբ լսեցինք թէ ի՛նչպէս գոհ մնացած էր ձեզմէ: Մեզի պատմեց, թէ անձկութեամբ կը սպասէք ինծի, թէ ո՛րքան ցաւած էք պատահածին համար եւ թէ ի՛նչպէս կապուած էք ինծի: Չէք կրնար երեւակայել որքա՛ն ուրախ եմ: Ընչդ է, որ նամակովս քիչ մը վշտացուցի ձեզ, բայց հիմա չե՛մ գղջար ըրածիս, թէպէտ գրելէս վերջ գղջացեր էի, քանի կը տեսնեմ, թէ այդ նամակս միայն կարճ ժամանակ մը վշտացուցեր է ձեզ: Ուրախ եմ հիմա, ո՛չ թէ ձեզ ցաւցուցած ըլլալուս համար, այլ որովհետեւ այդ տրտմութիւնը պատճառեղաւ, որ ապաշխարէք: Եւ որովհետեւ ձեր տրտմութիւնը Աստուծոյ գործին ծառայեց, ես պէտք չունիմ այլեւս խստութեամբ գալու ձեզի: Աստուած երբեմն մեզ կը ցաւցնէ՝ ապաշխարութեան միջոցաւ փրկութեան առաջնորդելու նպատակով, որուն համար չենք գղջար բնաւ: Մինչդեռ աշխարհի ցաւը մահուան կ'առաջնորդէ: Արդ, տեսէք թէ Աստուծոյ պատճառած ցաւը ի՛նչպէս անտարբերութենէն դուրս բերաւ ձեզ եւ մղեց որ դուք ձեզ արդարացնէք: Զայրացաք, տագնապեցաք, անձկութեամբ լեցուեցաք: Բայց յետոյ նախանձախնդրութեամբ վառեցաք եւ սխալը մէջտեղէն վերցուցիք, եւ ամէն կերպով ցոյց տուիք թէ դուք յանցանք չունիք այդ խնդրին մէջ: Հիմա ըսեմ թէ նախորդ նամակը գրելուս պատճառը միայն այդ յանցաւոր մարդը չէր, ո՛չ ալ անոր հայրը որուն դէմ գործուեցաւ յանցանքը: այլ որպէսզի յայտնուի այն հոգածութիւնը որ փոխադարձաբար իրարու հանդէպ ունինք Աստուծոյ առջեւ: Ուստի մենք մեզ մխիթարուած կը զգանք:

Մեր զգացած մխիթարութեան վրայ Տիտոս աւելի եւս ուրախացուց մեզ, ուրախութեամբ պատմելով թէ ի՛նչպէս բոլորդ ալ գոհ ձգած էք զինք: Ձեզի համար պարծանքս յայտնած էի իրեն, եւ ամօթով չմնացի. եւ ինչպէս ձեզի խօսածներս բոլորը ճշմարիտ էին, նոյնպէս ալ Տիտոսի յայտնած պարծանքս ճշմարտուեցաւ: Գիտէ՞ք թէ որքան մեծ սիրով Տիտոս կը խօսէր ձեր մասին. կը յիշէր թէ ի՛նչպէս կը հնազանդէիք իրեն, թէ ինչպիսի՛ ահ ու դողով ընդուներ էիք զինք: Արդ, ուրախ եմ որ կատարեալ վստահութիւն ունիմ ձեր վրայ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ  
(7.31-37)

**Յ**իսուս Տիւրոսի սահմաններէն մեկնելով, Սիդոնի վրայով անցաւ Դեկապոլիսի սահմաններէն եւ եկաւ Գալիլիայի ծովեզերքը: Եւ ահա իրեն բերին խուլ եւ համր մարդ մը՝ խնդրելով որ ձեռքը դնէ անոր վրայ: Յիսուս զայն ամբոխէն հեռու մէկ կողմ տարաւ, մատները անոր ականջներուն մէջ դրաւ, յետոյ թքեց եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ. «Եփփաթա՛», որ կը նշանակէ «բացուէ՛»: Նոյն վայրկեանին անոր ականջերը բացուեցան, եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ: Յետոյ Յիսուս պատուիրեց ժողովուրդին որ ոեւէ մէկուն չըսեն: Սակայն ինչքան ալ ան կը պատուիրէր որ չտարածեն, անոնք առաւել չափով կը պատմէին այս մասին: Մարդիկ աւելի եւս կը զարմանային եւ կ'ըսէին. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. տեսէք, խուլներուն իսկ լսել կու տայ եւ համրերուն՝ խօսիլ»:



## Անդրադարձներ Եւ Խորհրդածուրթիւններ

Փարիզի մէջ Ողիմպիական Խաղերն Էին: Եւ անոնց բացման ատեն՝ գայթակղեցուիչ տեսարան մը բեմադրուեցաւ: Տեսարանը կը նմաներ իտալացի Լեոնարդո դա Վինչիի «Վերջին ընթրիքը» պատկերին, նկարուած 15-րդ դարուն: Բայց արդար ըլլալու համար՝ տեսարանը աւելի կը նմաներ հոլանտացի նկարիչ Եան Ֆոն Պեյլըթի «Աստուածներուն խրախճանքը» պատկերին, նկարուած 17-րդ դարուն:

«Վերջին ընթրիքը» պատկերին մէջ՝ Յիսուս եւ իր 12 աշակերտներն են: Իսկ «Աստուածներուն խրախճանքը» պատկերին մէջ՝ յունա-հռոմէական դիցաբանութեան աստուածները: Յայտնապէս, հոլանտացի նկարիչը հեթանոսական իր երեւակայութիւնը ուզած էր եթէ ոչ հակադրել դա Վինչիի պատկերին, ապա գոնէ՝ նկարել:

Ըսի թէ՛ տեսարանը աւելի կը նմաներ

հոլանտացի նկարիչի պատկերին: Որովհետեւ՝ բեմադրուածը աւելի հեռուն գացած էր, այն երկիրը՝ ուր անառակ որդիին իսկ միտքէն չանցաւ երթալ: Բեմադրուածին տեղը չէր հոն: Մարգական կեանքը՝ ճգնութիւն կը պահանջէ, որովհետեւ ճգնութիւնը ներդաշնակութիւն կը ստեղծէ: Ներդաշնակութեամբ է, որ կարելի է ինքզինք գերազանցել:

Կը թուի, որ ժամանակակից բանապաշտ աշխարհը այնքան ձանձրացած է բանականութենէն՝ որ զգայարանապաշտութիւնը, եւ անոր ցուցադրամով այլասերումներն անգամ ջատագովելու վրայ է, որպէսզի իբրեւ Պաթոս կամ Դիոնիսիոս պարելով խոյս տայ իր հեղինակած իրականութենէն, որ քայքայումի իրականութիւն մըն է:

Կրօնական՝ եւ կրօնա-բարոյակա՞ն խնդիրը: Կարդա՛լ Պօղոս առաքեալի Յոմայեցիներուն ուղղած նամակին 1.22-32-ը:

ԳԸ

**«ՆՈՐ ԾԱՂԻԿ»**  
**ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԸ**  
**2024-2025 ՏԱՐԵՇՐԶԱՆ**



«Նոր Ծաղիկ» Մանկապատանեկան երգչախումբը իր փորձերուն կը վերսկսի Ուրբաթ, 4 Յոկտեմբեր 2024-ին: Փորձերը՝ ամէն Ուրբաթ ժամը 4.30-5.45: Վայր՝ Ս.Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Վերնատուն: Խմբավար՝ տիկ. Գոհար Մանուէլեան: Դաշնակահար՝ տիկ. Դայար Զարայոյեան-Գալլոդլեան: Արձանագրուելու համար հեռաձայնել՝ երեցկին Նինա Զիֆթճեան-Գոյունեանին. 514-945-6174



## ԴՈՒՆ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ ԵՍ



### ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄՐ ԱՊՈԹՔԱԵՐ ԸՆԵՐԱԲԵՆ

ՀԵՊԻՆԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԻՐԳԱՆԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՄՈՒՏԵԱՆԻ

Յարգելի ընթերցող,

2020-ի Յունիսին, բոլորիս ծանօթ պայմաններուն, թերթիկին մէջ Յենրի Նուընի «Ողորմութեան Կանչ Մը» գիրքի թարգմանութեան լոյս ընծայումը ընդհատուեցաւ: Սոյն թիւով կը շարունակենք ճիշդ ընդհատուած տեղէն: Կը խնդրուի նկատի առնել, թէ կը հետեւինք գրքի ընթացքին, նոյնիսկ եթէ նիւթը օրուայ խորհուրդին հետ չի համընկնիր: Շնորհակալութիւն Ձեր հասկացողութեան համար:

Ով Տէր, Մեծ Պահոց այս եղանակը շուտով կ'անցնի: Չայն դիմաւորեցի վախով, բայց նաեւ՝ մեծ ակնկալութիւններով: Յուսացի որ կ'ունենամ մեծ յանկարծիմացութիւն մը, զօրաւոր դարձ մը, սրտի իսկական փոփոխութիւն մը. ուզեցի որ Չատիկը ըլլայ օր մը լոյսով այնքան լի, որ նոյնիսկ մթութեան հետք անգամ չմնայ հոգիիս մէջ: Բայց գիտեմ որ քուկիններուդ չես գար կայծակով ու որոտումով: Նոյնիսկ Ս. Պօղոս եւ Ս. Ֆրանսիս խիստ մթութեան միջով ճամբորդեցին՝ լոյսիդ հանդիպելէ առաջ: Թոյլ տուր որ շնորհակալ ըլլամ քու բնբշուրեանդ համար: Գիտեմ որ գործի վրայ ես: Գիտեմ որ զիս հանգիստ պիտի չձգես: Գիտեմ, որ զիս Չատիկին համար կը պատրաստես, բայց ըստ պատմութեանս ու խառնուածքիս:

Կ'աղօթեմ, որ վերջին այս երեք շաբաթները, երբ կը հրաւիրես զիս աւելի ամբողջականօրէն չարչարանքիդ խորհուրդը մտնելու, բերենք բեզի հետեւելու աւելի մեծ իղձ մը՝ ինծի համար ստեղծած ճամբուդ վրայ, ինչպէս նաեւ ընդունելու՝ ինծի տուած խաչդ: Տուր որ մեռնիմ տենչին՝ իմ իսկ ճամբաս եւ իմ իսկ խաչս ընտրելու: Դուն զիս հերոս մը դարձնել չես ուզեր, այլ՝ ծառայ մը որ քեզ կը սիրէ:

Յետս եղիր վաղը եւ գալիք օրերուն, եւ տուր որ հեզ ներկայութեանդ փորձառութիւնը ապրիմ: Ամեն: (Շար. 21)

## Ս. Խաչի Վերացման Տօն

Կիրակի, 15 Սեպտեմբեր 2024

Սկիզբ ժամերգութեան՝ 9.30

Սկիզբ Ս. Պատարագի՝ 10.30

Յաւարտ Ս. Պատարագին՝  
Անդաստան